

ԿՐԿԵՍԸ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մեր նպատակն է, նախ ուրվագծել կրկեսի կազմաբանությունը (անառողմիա): Ի՞նչ է դա նշանակում: Եթե յուրաքանչյուր արվեստի երևույթ դիտարկենք իրեն կենդանի մարմին, որն ունի ուրույն, միայն իրեն հատուկ ծագումնաբանական (գենետիկա) կառուցվածք, ապա ակնհայտ է, որ կրկեսային արվեստում էլ պետք է փնտրել նույնպիսի մի ինքնատիպ կառուցվածքային համակարգ: Սակայն այստեղ էլ հարց է առաջանում, իսկ արդյո՞ք կրկեսն ինքնուրույն արվեստ է: Այս թեական վերաբերմունքը նոր չէ, ժամանակին արվեստի ձևաբանությամբ (մորֆոլոգիա) զբաղվողներն այդ կապակցությամբ արդեն նշել են իրենց տարակուսանքները՝ ընդգծելով կրկեսային արվեստում միատարր գեղարվեստական հյուսվածքների բացակայությունը¹, ինչն էլ թույլ չի տալիս դիտելու այն, որպես բնօրինակ արվեստի երևույթ:

Խնդրի այսպիսի ըմբռնումն ունի նաև իր նախապատմությունը: Ի սկզբանե կրկեսը դիտել են սոսկ, որպես թատրոնի մի տարատեսակ: Վ. Վանլողովսկի-Գենդրոսն անդամ դատնում էր, թե կրկեսը միայն պայմանաբար կարող ենք թատրոնից սերված համարել, քանի որ «թատերական ինչ-որ մի հետպույն ձևի տարալուծման արդյունքը կամ էլ դրա բաղադրամասերից մեկի զարդացած տեսակը չէ»²: Եթե հաշվի առնենք, թե ժամանակին ի՞նչ չափով է այս խնդիրն ընդհանրապես ուսումնասիրված եղել, ապա թատերագետի զգուշությունը միանգամայն հասկանալի կդառնա: չժխտելով կրկեսի ինքնօրինակությունը՝ նա, այնուամենայնիվ, չի տեսնում նաև այդ արվեստի բնածին տարրերը, ուստի և համարում է այն ընդա-

մենը տարրասեռ երևույթների հանրագումար:

Հետագայում այս տեսակետը մասամբ փորձեց վիճարկել Ե. Կուզնեցովը «Կրկես. ծագումը, զարգացումը, հեռանկարները» խորագիրը կրող իր Փունդամենտալ աշխատության մեջ, որի հիմքան առարկան եվրոպական նորագույն կրկեսի ձևավորման պատմությունն է: Ըստ Ե. Կուզնեցովի, կրկեսը որպես արվեստի երեսույթ միասեռ է և առանձնանում է տարածաժամանակային մյուս արվեստներից՝ պարարվեստից և թատերական արվեստից, չնորհիվ կրկեսային հնարանքների (արյուն), որոնք էլ փաստորեն իրենց շուրջն են համախմբում մյուս բոլոր խաղարկային տարրերը²: Ուշագրավ է նաև այդ առանձնահատկության մնանությունը, որ հեղինակը տալիս է նշված աշխատության մեկ այլ էջում. «Պատմության ողջ ընթացքում կրկեսի առանձնահատկությունը դրսնորվել է մարդու և կենդանու ֆիզիկական գործողությունների (մկանային շարժիչների) միջոցով, որոնք դրսնորվել են ոչ թե պայմանական եղանակով, այլ բնական պայմաններում, եռաչափ իրականության մեջ: Ֆիզիկական արգելքների իրական հաղթահարումը կրկեսի... առաջնային տարրն է: Հետեւաբար, կրկեսի... հիմնական առանձնահատկությունը կարելի է սահմանել հնարանք հասկացությամբ»⁴: Այս ձևակերպումն, անշուշտ հիմնարար նշանակություն ունի կրկեսի համար, բայց մի էական վերապահությամբ. հնարանքն այստեղ դիտվում է գույտ, որպես ֆիզիկական գործողություն, բայց չէ՝ որ մեզ այն հետաքրքրում է, որպես գեղարվեստական երևույթ:

Կրկեսային արվեստում բարդ հնարանքների ցուցադրումը, իրուն գարմանալի խաղ, դեռևս բավարար պայման չէ, որպեսզի այն իրապես գեղագիտական աֆենքտ առաջացնի: Այս կապակցությամբ մտարերենք Յոհան Հայզենգայի հետևյալ դիպուկ բնորոշումը. «Ուժի և ճարպկության փորձությունը, ինչպես օրինակ տասներկու տապարների միջով Ողիսեսի արձակած նետը, ամրողովին խաղի ոլորտում է: Դա արվեստի ստեղծագործություն չէ, այլ...մի հնարանք (Kunststück)»⁵: Եվ իրոք, աներևակայելի հրաշքն անգամ կրկեսում կարող է գառնալ իրողություն, բայց մի՞թե հենց միայն դա է, որ գրավում է հանդիսատեսին և նրան գեղագիտական բավականություն պատճառում: Եթե իրոք այդպես լիներ, ապա այստեղ ընդամենը կներկայացվեին զանազան արտասովոր վարժություններ, որոնք միմյանց հետ

իրապես ոչ մի առնջություն չէին ունենա, քանզի դրա անհրաժեշտությունն էլ չէր լինի: Եվ, բնականաբար, նաև չէր կարող խոսք դնալ որևէ միասնական ու ամբողջական կառուցի մասին, ինչը հատուկ է ամեն մի գեղարվեստական ստեղծագործության: Պարզաբանելու համար այս խնդիրը՝ դիտարկենք այն կրկեսային տարրեր խաղատեսակների համատեքստում:

Դիցուք, վերցնենք կրկեսային աճպարարությունը. եթե տարածաժամանակային մյուս արվեստներում արտիստն ու նրա միջամտությամբ գործող առարկաները միմյանցով պայմանավորված են կամ իրար լրացնում են (պար, դրամատիկական թատրոն, տիկենիկային թատրոն, ստվերների թատրոն և այլն), ապա աճպարար-արտիստն ընդգծված «օտարվում» է իր առարկայական միջավայրից և հանգես է գալիս ոչ թե իրրե խաղին մասնակից, այլ իրրե խաղը ներկայացնող: Նրա արարքները շատ արտիստիկ են և տպավորիչ, սակայն իրականում միտումնավոր շեղում են հանդիսատեսի ուշադրությունը հիմնական գործողությունից, և այդպիսով առաջնայինն ու երկրորդականը շրջվում են դլխիվայր: Ահա, թե ինչու ամեն մի աճպարարական հնարանք հանդիսատեսի համար անսպասելի է ու անակեղակալ: Խաղն ամբողջությամբ ներկայացնում է արտասովոր մի գործողություն, որն իր անսպասելի շրջադարձերով զարմանքի ու հիացմունքի աֆեկտ է առաջնում: Փաստորեն, ոչ մի «իսաբեություն», ոչ մի «սուլու», ուստի և ոչ մի բացահայտ քողարկում կամ իրականության պատրանք, որ թատերական լեզվամտածողության ոլորտից է: Այդ իսկ պատճառով էլ արտիստն այստեղ կենդանու կերպարանք չի առնում և հանդես չի գալիս՝ իրրե այդպիսին: Նա համարձակ հրապարակ է դուրս բերում իրական կենդանիներ ու գաղանեներ, որոնք զարմանալիորեն գործում են իրենց բնությանը հակառակ, իսկ թե ինչո՞ւ և ինչպե՞ս՝ մինչև վերջ էլ մեռում է գաղտնիք:

Թեպետ, իհարկե, որոշ թատերական տարրեր, որոնք հանդիպում են նաև պարարվեստում (ասենք՝ ժողովրդական, կամ էլ սյուժետային պարերը), կրկեսում էլ կարելի է դիտել: Արդեն նկատել են, որ կենդանավարժության, ինչպես և գաղանավարժության մի շարք համարներ նման են թատերախաղերի, ուր հաճախ զանազան առակներից և հերիաթներից վերցված պատումներ են օգտագործվում: Զորքուանիներն այստեղ

ակներևաբար հանդես են գալիս իրրեւ գերակատարներ, բայց մի էական տարբերությամբ. սրանց կերպարային վարքագիծն ընդամենը կենդանավարժության հնարանքների արդյունք է, այլ ոչ թե գործող սուբյեկտի կամային արարք. կրկեսային այդ «Հերոսները» երրեք հանդես չեն գալիս իրրեւ իրենց անձնական շահերը հետապնդող անհատականություններ, ուստի և պրեգիկատն այստեղ չունի անձնավորված սուբյեկտ. ինչպես լեզվարանության մեջ է ընդունված ասել՝ «բայաձև դիմավոր» է: Այդ իսկ պատճառով էլ կենդանիների խաղն այստեղ նման է շահմատային ֆիզուրների խաղին, ինչպես այդ դիտում ենք նաև առակում կան հեքիաթում:

Հիմա վերցնենք այն խաղերը, որոնց մեջ գերակշռողը մարդկան տարրն է: Վճռորոշն այստեղ անմիջականորեն ուժի և ճարպկության կիրառումով կառուցված գործողությունն է, որը ներկայացնում է Փիզիկական վարժությունների մի շղթա՝ մարդկան հնարանքների հաջորդականություն: Սովորաբար, սկսելով պարզ վարժություններից, արտիստներն աստիճանաբար բարդացնում են դրանք, հասնում մարդու Փիզիկական հնարավորությունների դրսևորման ամենածայրահեղ սահմանին և խախտում այն՝ իրականացնելով անհնարինն ու աներևակայելին, ինչն էլ կարող է զարմանք ու հիացմունք առաջացնել: Բայց արդյո՞ք դա բավական է, որ նրա արածը համարենք արվեստի ստեղծագործություն: Իհարկե ոչ, քանի որ, ինչպես ասվեց, կրկեսում ամեն մի Փիզիկական վարժություն գեղարվեստական հետաքրքրություն է ներկայացնում, ոչ միայն իր արտասովոր հնարանքներով (Kunststück), այլ նաև (թերևս, առաջին հերթին) արտահայտչակերպով ու ձևով: Այսինքն՝ որպեսզի զարմանքին հաջորդի գեղագիտական աֆեկտը, անհրաժեշտ է Փիզիկական վարժությունը հաղթահարել գեղարվեստական ձևի միջոցով՝ հաղորդել նրան վերանցական (Transcendental) իմաստ:

Առաջին հայացքից կրկեսային ամեն մի խաղ արտասովոր է՝ գալիս է խախտելու, խեղելու մարդու իրական պատկերացումները և ներկայացնելու առարկայական մի իրողություն, որը ընության մեջ սովորաբար չի հանդիպում, քանի որ մտացածին է՝ երևակայության արդյունք: Սակայն չմոռանանք, որ մի բան է իրական և օրինաչափ երեւյթների աղավաղումը, խեղաթյուրումը և բոլորովին այլ՝ վերանցական գործողություն կա-

ռուցելը. մի դեպքում առարկան իրականության վերաձևումն է, մյուս դեպքում այն բացարձակ մտահայեցողական է՝ իրականությունից կտրված: Աչաթե ինչու, ամեն մի ճարպկորեն կառուցված հեարտնք դեռևս զեղարվեստական երեսւթ է, քանի որ ներկայանում է ընդամենը Փիդիկական արգելքների հաղթահարման կերպով: Ողիսեսը, որը պատրաստվում է նետն արձակել տասներկու տապարների միջով, ուղիղ համեմատելի է այն դրամատիկական հերոսի հետ, որը պատրաստվում է լուծել հակադիր շահերի բախման ընթացքում խճճված իր ճակատադրական խնդիրը: Երկու դեպքում էլ գործողությունն ընթանում է իրական հարթության վրա, անկախ այն բանից, թե ո՞րն է այդ գործողության նպատակը, և ի՞նչ եղանակով է այն դրսեռորդում. պայմանակա՞՞ն՝ իրրե թատերախաղ, թե՝ իրական՝ իրրե ճարպկության և ուժի ցուցադրում: Այդուհանդերձ, ձևարանորեն սրանք միասեռ երեսւյթներ չեն. մի դեպքում մեր առջե բեմախաղ է, որը դրամատիկական արվեստի երեսւյթ է, մյուս դեպքում՝ Փիդիկական վարժություն, որը պատկանում է մարդական ոլորտին:

Իշարկե, սպորտում էլ շատ հաճախ մրցախաղերն աչքի են ընկնում իրենց ընդգծված թատերայնությամբ. գեղարվեստական մարմնամարզությունը, ձևակոր չմշկառահքը, լողը և մի շարք այլ մարզաձեեր ինչ-որ չափով նաև գեղագիտական հետաքրքրություն են ներկայացնում: Պատահական չէ, որ կրկեսային արտիստներից շատերն իրենց նախակրթական շրջանն անցել են հենց այստեղ: Սակայն կրկեսային խաղն առանձնանում է մարզականից, նախ իր անշահանդիք բնույթով: Կրկեսային արտիստը գալիս է հաղթահարելու ոչ միայն Փիդիկական արգելքը, այլև այն դրամատիկական կիրքը, որ ենթադրում է ամեն մի մրցախաղ, այդ իսկ պատճառով էլ նրա խաղը գեղադիտականից զատ ուրիշ ոչ մի հետաքրքրություն չի կարող ներկայացնել: Եթե մրցախաղի առանձքում Փիդիկական արգելք հաղթահարող մարզիկն է, ապա կրկեսում առանցքայինը հենց խաղն է, որն էլ, կտրվելով իրականությունից, դառնում է զուտ մտահայեցողական արժեք: Հենց այստեղ է, որ հեղմանքը՝ իրրե գեղարվեստական միջոց, կրկեսային արտիստի համար դառնում է մի նոր՝ հնարանքից (արյունի) զատ, կառուցղական գործոն, որն օգնում է նրան հաղթահարել իր արտասովոր

արարքների իրական բովանդակությունը՝ Փիղիկականն ու Հռ-
պերանականը:

Այստեղ մոտենում ենք կրկեսային արվեստի մյուս առանձ-
նահատկությանը՝ Հնարանքների կառուցման կենտրոնազանց՝
էքսցենտրիկ ձևին, առանց որի նույնպես չկա կրկես: Ինչպես
նշում է Յու. Դմիտրիկը, «կրկեսը բազմաժանր է, բայց Հիմ-
քում միշտ էքսցենտրիկան է, որը փաստորեն կրկեսի ձևն է, և
առանց դրա, նույնն է թե՝ բանաստեղծությունն առանց հանդի,
թատրոնն առանց երկխոսության, գեղանկարչությունն առանց
ներկերի»⁹: Այս մեկնությունը Յու. Բորեկի կարծիքով ճիշտ չէ,
քանի որ «ոչ-ոք, չի բավարարվի պոեզիայի առանձնահատկութ-
յան այսպիսի բնորոշումով՝ բանաստեղծությունները հանդա-
վորված տողեր են: Միշտ չէ, որ հանգը պոեզիայի հատկանիշ է:
Ճիշտ այդպես էլ, էքսցենտրիկությունը չի կարող կրկեսի դիմա-
վոր հատկանիշը լինել»¹⁰: Կարծում ենք, Յու. Բորեկի առար-
կության մեջ մի չական վրիպում կա, այն է՝ ասելով «Ճե», նա
նկատի ունի առարկայի արտաքին նկարագիրը, տեխնիկական
կառուցվածքը, մինչդեռ, ըստ հության, խոսքը վերաբերում է
երեւոյթի գեղարվեստական արտահայտությանը:

Էքսցենտրիկա հասկացությունն օգտագործելիս, սովորա-
բար ենթադրում են կրկեսային զավեշտախաղերի այն սուր
ընդունված պահերը, որոնք արտասովոր են՝ կենտրոնազանց են
իրենց ծայրահեղ անհեթեթությամբ: Հանրագիտարանային բա-
ցատրություններն էլ, Հիմնականում հենվում են այնպիսի օրի-
նակների վրա, որոնք, ըստ հության, ծաղրածուական հնարանք-
ներ են և ուրիշ ոչինչ¹¹: Իհարկե, միաժամանակ նշվում է, որ
էքսցենտրիկ հնարանքներ «կարող են օգտագործվել կրկեսային
արվեստի բոլոր ժանրերում՝ ակրոբատիկայում, գիմնաստիկա-
յում, երաժշտական համարներում, կենդանավարժության մեջ
և այլն»¹², թեև այստեղ էլ, հասկանալի է, խոսքը վերաբերում է
այնպիսի հնարանքներին, որոնք զավեշտային շեշտավորումներ
ունեն: Բայց, արդյո՞ք դա թույլ է տալիս եղրակացնելու, որ
կենտրոնազանց խաղն առկա է կրկեսային արվեստի բոլոր ժան-
րերում: Եթե կենտրոնազանց ասելով չհասկանանք միայն ծի-
ծաղելին ու զավեշտականը, ապա այս: Զէ՞ որ յուրաքանչյուր
կրկեսային խաղաձև, ի վերջո, հենց կենտրոնազանց է, որպես
գեղարվեստական արտահայտություն: Այստեղ խախտվում են

բոլոր առօրենական ըմբռնումները՝ Հնարավորի ու անհնարինի սահմանները, և ստեղծվում է գեղեցիկը բնորոշող հատկանիշների՝ համաչափության և հավասարակշռության սպեցիֆիկ կրկեսային բնօրինակը: «Այս խաղի ներքին ելակետը, - իրավացիորեն նկատում է Հ. Հովհաննիսյանը, - տիեզերքի գերագույն օրենքն է՝ հավասարակշռությունը: Մարդը խախտում է օրենքը ու վերադառնում օրենքին»¹⁷: Հենց այս վերադարձն է չականը: Չէ որ ամեն մի արտասովոր Փիզիկական արարք ընդամենը կենտրոնագույն է՝ իրեն տիեզերային կենտրոնն ու հավասարակշռությունը խախտած երևույթ, հետևաբար ոչ մի հավակնություն չունի գեղարվեստական համարվելու, քանի որ խախտում է արվեստի առաջնահերթ օրենքները՝ միմեսիսը, սիթմն ու հարմոնիան (Արիստոտել): Մինչդեռ կրկեսային արտիստը հեգեմարք է նայում արտաքին աշխարհին՝ կյանքի սովորական առողջ տրամաբանությանը, և իր խաղով առարկայորեն գլխիվայր է շրջում իրականն ու անիրականը, ապա կրկին վերադառնում կենտրոն՝ «ի շրջանու իւր»՝ կրկեսի շրջանակենտրոն խաղահրապարակ, որի կառուցվածքում իսկ զրոշմված է տիեզերքի ունիվերսալ մոդելը: Դա հենց այն է, ինչի շնորհիվ կրկեսային հնարանքը Փիզիկական գործողությունից վերածվում է գեղարվեստական արտահայտության:

Իհարկե, իրավացի է Յու. Բորենը, երբ նշում է, որ հանդը պոեզիայի հիմնական հատմանիշը չէ, սակայն չենք կարող համաձայնվել գեղագետի հետ, երբ նա եղրակացնում է, թե «ճիշտ այդպես էլ էքսցենտրիկությունը չի կարող կրկեսի գլխավոր հատկանիշը լինել»: Կրկեսային խաղի արտասովոր բնույթը՝ զուտ Փիզիկական արտահայտություն չէ, այլ ծագումնաբանական առանձնահատկություն: Կրկեսին բնորոշ այդ գեղարվեստական լեզուն ճեավորվել է, դեռ վաղեջական ժամանակներում: Առաջին «Հրաշագործ» աճպարարներից սկսած, հեգեմոնին այն գեղարվեստական միջոցն էր, որն օգնում էր նախապաշարված մարդուն հաղթահարել «խորհրդապաշտական վախը»: Ինչպես ժամանակին դիպուլե նկատել է Ա. Լոսենը, արդեն հոմերոսյան պոեմներում առասպելաբանական մի շարք պատառմներ սոսկ կախարդական զվարճալի հեքիաթներ են հիշեցնում¹⁸, ուր հեգեմոնինքը նույնպես վճռորոշ գերակատարում է ունեցել¹⁹: Այստեղից էլ, կարծում ենք, տրամաբանական է, որ կրկեսն ու հե-

քիաթը իրենց գեղարվեստական առանձնահատկություններով համեմատելի են և անզամ կարող են «Հարազատ» համարվել¹⁶: Չէ՞ որ, թե՛ Հեքիաթում, թե՛ կրկեսում ամեն ինչ Հակառակ է իրական կյանքից եկող ծանոթ ու ըմբռնելի կացութաճներին:

Արդ, Հասկանալի է դառնում, թե ինչու կրկեսային խաղերի մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ծաղրածուական խաղը՝ բուն էքսցենտրիկ ժանրը: Այս խաղաձեկի մեջ Համաշխարհային ճանաչում ձեռք բերած մի շարք արտիստներ ներկայացնել են, իրքեւ որոշակի տիպամներ, իրենց ընդգծված անհանուական նկարագրով և վարքագծով: Դասական դրամատուրգիայում էլ սուր ընդգծված ծաղրածուական դիմակների պակաս չի զգացվում: Նրանցից շատերը գալիս են ժողավրդական Հեքիաթներից և զրույցներից (Թիլ Օյլենշփիդել, Հանս-Վուրսթ, Հիմար Իվանովչկա, Քաջ Նազար և այլն), իրենց հետքերելով Համապատասխան սյուժետային հորինվածքներ, որոնց մանրապատում զուգահեռ կարելի է Համարել ծաղրածուական ռեպրիզն (réprise) ու անտրեն (entrée): Մյուս կողմից, կատակերգական այդ Հեքրուների նախատիպերը Հանդիպում են հետապույն միմուսական խաղերում և Հասնում են մինչև ուշ միջնադար, մինչև կոմեդիա գելլ՝ արտե, որի արժապանքներն այսօր էլ լսելի են: Բայց և այնպես, որքան էլ կրկեսի ծաղրածուն կարող է Համեմատելի լինել Հրապարակային թատրոնի կատակերգական պերսոնաժների հետ, կա մի արմատական տարրերություն նրանց միջև: Այդ տարրերությունն ամենից առաջ կրկին բխում է կրկեսային մանեժում և թատերաբեմում գործողություն կառուցնելու ձևարանական սկզբունքներից: Այստեղ տեղին է մատրերել Լեռնիդ Ենդիբարյանի հետեւյալ դիպուկ բնորոշումը. «Բնեմում խաղը պատկերանում է դիմահայաց, իսկ մանեժում՝ շրջանակենտրոն է: Հենց այս հանգամանքն է կանխորոշում կրկեսային խաղի տեսակը»¹⁷: Անկատած, խաղահրապարակի կառուցվածքը վճռորոշ նշանակություն ունի խաղը, թե՛ ներկայացնելու, թե՛ ընկալելու համար, ինչով էլ պայմանավորված են մյուս առանձնահատկությունը, այն է՝ կրկեսում գործողության հորինվածքը գեղարվեստորեն կառուցվում է, ոչ թե պայմանական հավաստիություն ստեղծելու համար, ինչպես թատրոնում է, այլ անսքող ներկայանալու երևակայական մի հարթության վրա՝ «ժամանակից ու տա-

բածությունից դուրս»: Այստեղ անհեար է սուսը քողարկել, ինչպես թատրոնում ճշմարտացի ապրումներով վարակելու համար, և, վերջապես, դրա անհրաժեշտությունն էլ չկա, քանի որ «երկեսը ուրքից-գլուխ մերկ է»¹⁹:

Հիմա վերցնենք էքսցենտրիկ ժանրերին հատուկ կոմիկականի՝ երգիծականի ու ծիծաղիլի հիմքում ընկած հեղնանքը, որը, ինչպես կասեր Ֆրիդրիխ Շլեդլը, «քարձունքից է նայում բռնոր երևույթներին՝ վեր կանգնելով իրականությունից, անզամ սեփական արվեստից»²⁰, այս գեղագում՝ էքսցենտրիկ արարքներից: Իսկ ինչպես է դա արտահայտվում. սկզբունքորեն սա միայն կրկեսային արվեստին հատուկ խաղի ձևակերտման այն երկակի՝ անմիջական և միջնորդավորված հղանակն է, երբ մի դեպքում արտիստն ինքն է միաժամանակ և՝ սուրյեկտը՝ որպես գործողության կողող, և՝ օբյեկտը՝ որպես գործողության «առարկա», մյուս դեպքում օբյեկտը սուրյեկտական դուրս է և միայն նրա միջնորդությամբ է մտնում խաղի մեջ, ասել է թե՝ գործողության կրողը միաժամանակ հանդես է դալիս և՝ որպես սուրյեկտ, և՝ օբյեկտ՝ օտարվելով, «վեր կանգնելով» ինքն իրենից և իր արածից: Պատահական չէ, որ առաջին ծաղրածուները մինչև իրենց նոր դերատեսակին հմտանալը հանդես էին գալիս մարդական խաղերով, մասնավորապես՝ ակրոբատիկայով և լարախաղացությամբ: Հենց այս հանգամանքն էլ կանխորոշեց ծաղրածուական խաղի ձևակերտման հիմնորոշ առանձնահատկությունները: Այստեղ նույնակես հեղնանքը կառուցողական դերակատարում ունի, սակայն մի հական տարրերությամբ. եթե մարդական ժանրերում Փիզիկական գործողությունը, կտրվելով՝ իրականությունից, ներկայանում է զուտ որպես մտահայեցողական գեղարվեստական ձև, ապա ծաղրածուի էքսցենտրիկ վարքագծում խեղաթյուրվում, վերածելով է հենց նույն այդ գեղարվեստական ձևը, ասել է թե՝ այն կրկին հաղթահարվում է, բայց արդեն իրական հարթության վրա՝ իրեն ծաղրանմանակում: Ամեն ինչ շրջելով գլխիվայր, ծաղրելով ու միաժամանակ ծաղրվելով՝ այս ժանրի արտիստները ներկայացնում են արտառոց (գրուտեսկ) հակադրություններից (կոնտրաստ) կառուցված խաղ, ուր ամեն ինչ իրական է ու միաժամանակ՝ անիրական: Ուստի այդ երկվորթյամբ էլ պայմանավորված է ծաղրախաղերի ձևակերտման կառուցողական գործոնը՝ ամեն ինչ ու ամեն-

քին, այդ թվում սեփական անձը խեղաթյուրելու սկզբունքը: Սա է Հեղեանքի այն նոր տեսակը, որ կրկեսային ասպարեզում հայտնվել է ծաղրածուական ժանրի ձևավորման ընթացքում և դրեթե անփոփոխ մտել է նորագույն կրկես:

Եվ այսպես, մի դեպքում՝ ժարդական ժանրերում, արտիստը, Հեղեանքի հաղթահարելով կրկեսային հնարանքների ֆիզիկական բնույթը, կառուցում է գեղարվեստական ձեւ, մյուս դեպքում՝ ծաղրածուական ժանրում, ֆիզիկական վարժությունները գեղարվեստորեն հաղթահարելու համար կրկնակի ճանապարհ է կտրում. մեկ կանգնում է իրական հարթության վրա և այս դիրքերից Հեղեանք ամեն մի գեղարվեստական ձեւ, ապա վեր կանգնելով իրականությունից՝ կրկին Հեղեանք է, բայց այս անդամ՝ իր իսկ վարդագիծը:

Իհարկե, թատրոնում էլ կարող են դիմել խաղի ձևակերտման-այնպիսի միջցների, որոնք ուղղակի գալիս են կրկեսից: Սակայն խնդիրն այն է, թե ի՞նչ չափով են դրանք այստեղ ներմուծվում և ինչպես են դրանորվում թատերարվեստի լեզվամտածողության մեջ: Հայտնի է, որ կրկեսային խաղաձևեր սկսել են օգտագործել XIX դարավերջի և XX դարասկզբի նորարարութիւնուներ Պ. Ֆուէքսն ու Վ. Մեյերխոլդը: «Հատկապես դա պետք է վերաբերի ակրոբատիկական արվեստին, - գրել է Ֆուէքսը: - Ենքապիրյան դրամաների ծաղրածուները ընավ էլ վիլիստիայող ծաղրածուներ չեն, ինչպիսին դարձել են գրականության բռնակալ ձեռքի տակ: Նրանք ժամանակակից «էքսցենտրիկ արտիստների» հարազատ եղբայրներն են, որոնց արվեստում առատորեն օգտագործվում են ակրոբատիկ տարրեր»²⁰: Մեյերխոլդը, գրեթե միևնույն միացն արտահայտել է այսպես: «Եթե թատրոնից հանենք խոռը, հանդերձանքը, լուսարձակները, կուլիսները, շենքը և թողնենք միայն դերասանին ու նրա խաղը, թատրոնն այնուամենայնիվ կմնա թատրոն», ուստի, - եղբակացնում է նա, - դերասանն էլ «պարտավոր է տիրապետել այնպիսի վարպետությանը»²¹: Դերասանական արվեստի այս ըմբռնումը, անշուշտ հեռու չէ նրա գոյարանական հատկանիշներից, սակայն դա բնավ չի նշանակում, թե այդպիսով թատրոնն ու կրկեսը գրեթե նույնանում են: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր կառուցողական գործոնը, որ գերիշխում է մյուս բոլոր

գործոնների վրա. թատրոնում դա կերպավորված և զիպաշարային գործողության դոմինանտն է, կրկեսում գեղարվեստը բեն հաղթահարված էքսցենտրիկ հնարանքներն են: Անգամ ծաղրածուական խաղի մանրապատում սյուժեն վճռորոշ դեր չի կատարում այդ արվեստը համեմատելու համար դերասանական արվեստի հետ: Եթե զիպաշարը թատերախաղի, այսպես ասած, բովանդակային հենքն է, նրա ոգին, և բնավորություններն էլ ձևվում են ըստ արարքների (Արիստոտել), ապա կրկեսում ճիշտ հակառակն է, գործողությունը կառուցվում է ծաղրածուական դիմակին համապատասխան, և այստեղից է բիում նրա արարքների շղթան, որն էլ հենց սյուժետային հորինվածք է հիշեցնում, թեպետ ոչ մի առնչություն չունի թատերապատումի հետ: Ահա թե ինչու կրկեսում ծաղրածուական խաղի բովանդակային հենքը էքսցենտրիկ հնարքներն են, որոնցից էլ կառուցվում է յուրաքանչյուր ծաղրախաղ: Բնականաբար, մյուս բոլոր տարրերը, նաև՝ պարարվեստից ու թատերարվեստից եկած, նույնպես ենթարկվում են հենց այդ կառուցվածկան գործոնին, ինչպես պոեզիայում ամեն ինչ ենթարկվում է բանաստեղծական ոիթմին: Հետևաբար այստեղ էլ կրկեսն առանձնանում է թե՛ պարարվեստից, թե՛ թատրարվեստից միայն իրեն հատուկ խաղային կառուցվածքով և գեղարվեստական լեզվամտածողությամբ:

Այդուհանդերձ կա մի գոյաբանական չափանիշ, որն ընդհանրացնում է այս արվեստները. դա գործողությունն ի ցույց հանդիսատեսին ներկայացնելու հանգամանքն է, որը գալիս է գետես հնապույն սինկրետիկ հանդիսաւթյուններից և դրանքովում է հանձինս պարողի, գերասանի և կրկեսային արտիստի: Հենց այդ հնագույն ծիսական խաղերի ընդերքում էլ ի սկզբանե ծնունդ է առել միմական խաղը՝ իրրե միաձույլ արարողակարգ, որից հետագայում առանձնացել են պարային, զբանագույն ակրորդատիկ, կամ կրկեսային ձևերը²²:

Առաջին հերթին դա պայմանավորված էր ներկայացումների կառուցվածքային հորինվածքով: Թատերարվեստը հենց սկզբից էլ գործ է ունեցել զիպաշարային պատումների հետ: Ահա թե ինչու ողբերգության (նույնն է թե՝ ընդհանրապես դրամայի) բաղկացուցիչ մասերից առաջինը, ըստ Արիստոտելի, զիպաշարն է (մաս-թօշ): Պարարվեստի խաղային ձևերը նույն-

պես սկիզբ են առել բանահյուսական ակունքներից, միայն թե դրանք արդեն դիպաշարային չեին, այլ երգային էին՝ հորինված քնարական պոեզիային հատուել ոփթմամեղեղային եղանակով։ Կրկեսային խաղերում էլ տեսանելի էին հնագույն առասպել-ների հետքերը։ Ինչպես արդեն ասել ենք, ավանդական գրույց-ներում հանդիպող ամեն մի արտասովոր երեսույթ կարող էր այստեղ ի ցույց դրվել՝ իրքն «զգործն զարմանալիս»։ Հետո հնագարյան առասպելապատումների ավանդման եղանակներն էլ իրենց հերթին պայմանավորեցին դրանց խաղաձեռ՝ գործողություն կառուցելու տեսակը։ Թատերական արվեստում վեպերգային հորինվածքներին հատուել դրամատիկական մոտիվները հետազայում ենթարկվեցին դրամատուրգիական մշակման, ուստի և գերասանական արվեստի համար զոմինանա դարձավ կերպավորված գործողությունը։ Պարարվեստում խաղը ձեռք բերեց երաժշտությանը համապատասխան գեղազարդային նկարագիր։ Իսկ ահա առասպելական հրաշապատումներն արտասովոր հնարանքների միջոցով առարկայացան կրկեսային խաղահրապարակներում, ուր զարմանագործ արտիստները հաղթահարում էին ամեն մի արդելք՝ անիրականը դարձնելով իրական, անհնարինը՝ հնարավոր։

Ինչպես տեսնում ենք, պարզորոշ գծագրվում է եռաստեղ մի պատկեր, որի կենտրոնում հնագույն միմական խաղն է, հետևյալ ճյուղավորումներով։ պար – թատրոն – կրկես։ Հանդիսանքային արվեստների այս ձևաբանական համակարգն, անշուշտ, դինամիկ կառույց է, որի բնից դուրս եկող երեք ճյուղերի միջև մշտապես առկա է փոխներթափափառման և փոխազդեցության դաշտը։ Պարարվեստում կիրառվում են, և՝ թատերական, և՝ կրկեսային արվեստին հատուել բազմաթիվ տարրեր, ինչպես և թատրոնում են առատորեն օգտագործվում, և՝ պարային, և՝ կրկեսային խաղաձեռը։ Ինչ վերաբերում է կրկեսին, ապա այստեղ էլ նկատելի է միենալույն միտումը։ Պարարվեստին և թատերարվեստին բնորոշ մի շարք գծեր հաճախ առկա են կրկեսային ներկայացումներում, ուստի լրացուցիչ դժվարություն են ստեղծում նրա բուն գեղարվեստական լեզուն ճանաչելու համար։

Դ. Լիխաչովի դիպուեկ բնորոշմամբ, պոեզիայում խոսքը գեղարվեստական իմաստ է ձեռք բերում, երբ հաղթահարվում է նրա սովորական, առօրեական նշանակությունը և բացա-

Հայտվում է «գերիմաստային» էռլիթյունը («Сверхсмысловая» սցիոնություն): Այդպես է նաև կրկեսում. Հեղնորեն հաղթահարելով արգելքները, արտիստը մի նոր՝ «գերիմաստային», ասել է թե՝ վերանցական (Transcendental) արտահայտություն է հաղորդում իր ֆիզիկական գործողությանը: Հենց սա էլ կրկեսային խաղի գեղարվեստական առանձնահատկությունն է: Դրանով են կրկեսային արտիստի արարքները սկզբունքորեն տարբերվում է նաև թատերական արվեստին հատուկ կերպավորված խաղից:

Ս. Ալեքսանդերը նկատում է, որ գրականության երկվությունը (դիմուտումիա) արձակի և պոեզիայի միջև, հատուկ է ըոլոր արվեստներին. մի դեպքում, գեղարվեստական ձեր ստանում է պատկերային արտահայտություն, մյուս դեպքում՝ մտահայեցողական, ոչ պատկերային ձեւ:²⁴ Փամանակին Ն. Հարտմանն երկու սկզբանական արվեստները բաժանել է ըստ նրանց ձևակերտման երկու սկզբունքների, մի դեպքում՝ երբ ստեղծագործությունը կերպավորված է իրական երևույթներին համապատասխան (ալլաստիկա, գեղանկարչություն, գրականություն), մյուս դեպքում՝ ստեղծագործության առարկան իրականության մեջ գոյություն չունեցող, բայց մտահայեցողաբար «տեսանելի» ձեերն են (երաժշտություն, ճարտարապետություն, զարդանախշ):²⁵ Եվ իրոք, գեղանկարչության, քանդակագործության, գրականության մեջ պատկերական նշաններ (նույնիսկ, երբ գրողը կամ նկարիչը դիմում է անիրական, ֆանտաստիկ պատկերների, միևնույն է հաղորդում է դրանց առարկայորեն ճանաչելի ձեեր), իսկ ահա պարարվեստում, երաժշտության և ճարտարապետության մեջ, գեղարվեստական ստեղծագործության արտահայտությունը հեռանում է պատկերային այն ձեերից, որոնք կարող են հանդիպել առօրյա կյանքում, քանի որ երաժշտական հեջյուններն իրականության մեջ գոյություն չունեն, ինչպես և պարի կամ ճարտարապետական կառույցի նման պատկերներ բնության մեջ չեն հանդիպում:

Կրկեսային արվեստը նույնպես առանձնանում է խաղի իր ոչ պատկերային արտահայտչալեզգվով, և ավելի մոտ է պարարվեստին, քան թատերական արվեստին: Ակներեւ է, որ թե՛ մեկին, թե՛ մյուսին, հատուկ է դործողության ճարտարակերտ հորին-

վածքը, ինչպես այդ դիտում ենք նաև երաժշտության մեջ։ Պատահական չէ, որ պարարվեստում Ժ.-Ժ.Նովեռն ընդգծել է ոչ միայն երաժշտությանն ու գեղանկարչությանը հատուկ գծեր, այլև ծիավարժությանը²⁷։ Եվ իրոք, խորեոգրաֆիային բնորոշ տարրեր առկա են զրեթե բոլոր կրկեսային խաղերում՝ ակրորատիկայում և էկվիլիբրիստիկայում, մարմնավարժության և կենդանավարժության մեջ, աճպարարական և ձեռնածուական արվեստներում։ Վերջապես չմոռանանք, որ հին հունարեն ‘ակրօթաτε’ո բառն ուղղակի նշանակում է «քայլել ոտնամատների ծայրերի վրա»²⁷։ Պատկերն այնքան հստակ է, որ, կարծում ենք, լրացուցիչ մեկնության կարիք չի էլ զգացվում։ Փիզիկական գործողության այս նկարագրությունն ուղղակի տանում է մեղ դեպի պարարվեստը, իսկ ավելի ստույգ՝ բալետային արվեստը, ուր ակրոբատիկան, ինչպես հայտնի է, ի սկզբանե որոշակի տեղ է զբաղեցրել։ Այսուեղից հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ կրկեսային արվեստն էլ իր հերթին այդքան սերտաճ է պարի հետ։ Աչա թե ինչու խաղի հիմնորոշ հատկանիշն այստեղ գործողության ոչ պատկերային ձևակերտումն է։ Ա. Լանգերի այն միտքը, որ երաժշտությունը՝ որպես գեղարվեստական ձև, թեև գուգորդվում է կյանքից եկող ապրումներով, սակայն դրա ենթադրվող իմաստը երբեք հնարավոր չէ սահմանափակել պատկերային շրջանակների մեջ²⁸, հավասարապես կարելի է վերագրել նաև կրկեսային արվեստին։ Այլ կերպ ասած, թե՛ պարարվեստում, թե՛ կրկեսում, դոմինանատը խաղի բանաստեղծականությունն է։

Այդուհանդերձ, գործողությունն կառուցելու առումով նրանց միջև սկզբունքային տարրերություն կա։ Ամենից առաջ, դա կրկեսային խաղը համախմբող արտաստվոր հնարանքներն են, որոնք հատուկ չեն պարարվեստին։ Հետո, պարային շարժումը մեղեղային է, իսկ կրկեսին բնորոշ են շեշտակի ռիթմերը։ Առաջինը կառուցվում է զեղանկարչական հարթության վրա։ Երկրորդը պլաստիկ ծավալների կառույց է։ Իհարկե, այս համեմատությունները խիստ պայմանական են և արվում են մի նպատակով՝ մտահայեցողաբար տեսանելի դարձնելու նրանց գեղարվեստական արտահայտչալեզվի առանձնահատկությունները։

Թատրոնի հետ համեմատելիս, խնդիրը բարդանում է, հաշվի առնելով դերասանական արվեստին հատուկ նույնպիսի մի

ձեարանական երկվություն (դիխոտոմիա), որը հատուկ է գրականությանը (արծակ և պոեզիա): Խոսքը վերաբերում է, այս կոչված, «վերապրումի»՝ պատկերային, և «ցուցադրման»՝ ոչ պատկերային խաղարվեստի տեսակներին: Եթե մի դեպքում դերասանը ստեղծում է «մարդկային ոգու իրական կյանքը և արտացոլում է այն գեղարվեստական բեմական ձեի մեջ»²⁹, ապա մյուս դեպքում նրա ձևակերտման նյութը միմիայն մարդու ոգեղին կյանքն է, որի արտահայտչալեզուն կարող է ոչ մի առնչություն չունենալ իրական կյանքի հետ: Գեղարվեստական այս խաղակերպի ամենահակիրճ և ամփոփ մեկնությունը պատկանում է Կոկեն-ավագին: «Արվեստը, - ասել է նա, - կյանքը չէ, և նույնիսկ նրա արտացոլումն էլ չէ: Արվեստն ինքն է իր արարիչը: Նա ստեղծում է իր սեփական կյանքը՝ ժամանակից ու տարածությունից դուրս, սքանչելի իր վերացականությամբ»³⁰: «Ցուցադրման», ոչ պատկերային արտահայտություն ունեցող թատրոախաղը, ի վերջո, բնականորեն վերադառնում է իր ակունքներին, երբ նրա լեզուն ընդամենը միմական ժեստն էր՝ խաղի մեջ մարդկային ոգու ամենաարտահայտիչ դրսեռումը: Ինչպես դիմուկ նկատել է Ա. Տաիրովը. «Մնջախաղը խուզ ու համրերի համար նախատեսված ներկայացում չէ, մնջախաղն այնպիսի մասշտարի ներկայացում է, ոգու այնպիսի բացահայտում, երբ խոսքերը մեռնում են և փոխարենը ծնվում է իսկական բեմական գործողություն»³¹: Այստեղ, թվում է, թե մնջախաղն ուղղակի մերձենում է կրկեսային արվեստին իր «գերիմաստային» նշանակությամբ, իբրև բանաստեղծականացված գործողություն: Սակայն որքան էլ, ոչ պատկերային բեմարվեստի լեզուն ձեռք բերի վերանցական կերպածե, զուտ մտահայեցողական արտահայտություն, այնուամենայնիվ կա մի եղր, որն անհնար է խախտել. դա անհատականացված գործողության գոմինանան է, երբ ամեն մի արարք՝ պրեդիկատ, տվյալ գործող անձի՝ սուբյեկտի, ընութագիրն է դառնում, լինի այն բնավորություն, տիպ, թե խորհրդանիշ: Խոկ ահա կրկեսում, ինչպես արդեն նշեցինք, ճիշտ հակառակն է՝ «Հերոսն» այստեղ երբեք հանդես չի գալիս, իբրև անհատականություն և նրա արարքներն ընդամենը գեղարվեստորեն հաղթահարված արտասովոր հնարանքներն են, որոնց նպատակն է հեղնանքի, զարմանքի ու հիացմունքի միջոցով գեղադիտական աֆեկտ առաջնել հանդիսատեսի մեջ:

Նորագույն կրկեսի ժանրային համակարգը հիմնականում սկսել է ձևավորվել XVIII դարավերջին և XIX դարասկզբին։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ասպարեզ եկան առաջին ձիամարդական դպրոցներն ու թատրոն-կրկեսները, որոնք էլ ի վերջո ընդգրկեցին իրենց մեջ հրապարակում մինչ այդ եղած կրկեսային խաղերի գրեթե բոլոր տեսակներն ու տարատեսակները՝ մարդական, էքսցենտրիկ և թատերային։ Իշարկե, հետադայում և՝ դրանց խաղարկման եղանակները, և՝ տեխնիկական հնարքների կիրառման ձևերը գնալով ավելի հարստացան ու կատարելագործվեցին, ինչն էլ, բնականարար, չէր կարող չթելադրել նաև գեղարվեստական նոր չափանիշներ և գեղագիտական նոր ըմբռնումներ։ Այդուհանդերձ կրկեսային արվեստն իր ծագումնաբանական կառուցվածքով այդպես էլ մնաց անփոփոխ։ Անգամ թատերարվեստից կամ էլ պարարվեստից ներմուծված մի շարք տարրեր չխախտեցին այն հիմնորոշ ու առանցքային չափանիշները, որոնցով բնութագրվում է կրկեսը՝ իրրեկի ինքնուրույն և ամբողջական գեղարվեստական երևույթ։ Եվ դա առավելապես պայմանավորված էր հենց այն ձևաբանական առանձնահատկություններով, որոնք միշտ էլ հատուկ են եղել այդ արվեստի բոլոր ժանրերին՝ անկախ ընույթից և ձևակերտման եղանակներից։

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ ժանր հասկացությունը՝ իրրեկ ձևաբանական եղլ, կրկեսում սկզբունքորեն այլ իմաստ ունի, քան գրականության մեջ կամ էլ արվեստի մյուս ընադապառներում։ Ինչպես գիտենք, գեղարվեստական ժանրի ըմբռնման հարցում առհասարակ միասնություն չկա։ Սովորաբար, ընդունված է կողմնորոշվել ըստ գեղարվեստական ստեղծագործության կառուցվածքային և տիպարանական առանձնահատկությունների, ինչը նույնպես հաճախ չի ենթարկվում հօտակ դասակարգման։ Կրկեսում, ընդհակառակը, ժանրերը ստույգ սահմանադրատվում են ոչ միայն ըստ խաղի ձևակերտման եղանակների՝ անմիջական և միջնորդավորված գործողություն կառուցելու ձևերի, այլև այն ֆիզիկական վարժությունների՝ հեարանքների, որոնց միջոցով էլ կառուցվում է տվյալ գործողությունը։ Ահա թե ինչու, առաջին հայացքից, կրկեսային ներկայացման մեջ ամեն մի համար ընկալվում է իրրեկ ինքնուրույն և առանձին ելույթ, որն առաջին հայացքից կարծես

ոչ մի առնչություն չունի նախորդ կամ Հաջորդ համարների հետ: Սա հենց այն առերևույթ տպավորությունն է, որի պատճառով էլ շատ հաճախ կրկեսը չեն դասում մագսուր արվեստների շարքին՝ մասնավորապես, վիճարկելով նրա միատարր լինելը: Մինչդեռ ձևաբանական հայեցակետից, ինչպես տեսանք, պատկերը բոլորովին այլ է. յուրաքանչյուր կրկեսային ժանր միաժամանակ ներառում է, և՝ մարզական, և՝ էքսցենտրիկ, և՝ թատերային տարրեր, որոնք իրեն ծագումնաբանական նշաններ առանձնացնում են այս արվեստը տարածաժամանակային մյուս արվեստներից: Այդ իսկ պատճառով էլ միևնույն ժանրում շատ հաճախ խաչաձևվում են զանազան այլ ժանրային տարրեր՝ բնավ չխախտելով այս արվեստի բուն գեղարվեստական հատկանիշները: Ըստ այդմ, կրկեսային ներկայացումը՝ միայն իրեն հատուկ եռամիասնության սկզբունքով, կառուցվում է որպես մեկ գեղարվեստական համակարգ, ասել է, թե՝ մարզական, էքսցենտրիկ և թատերային ժանրերի ամբողջություն: Ըստ որում, ամեն մի ժանր այստեղ իր հերթին նույնպես ենթարկվում է այդ եռամիասնության սկզբունքին:

Հիմա, ամփոփելով մեր դիտարկումները, թերևս, կարող ենք եղակացնել, որ կրկեսի գեղարվեստական համակարգը եռանիստ մի կառույց է՝ մարզական, էքսցենտրիկ և թատերային խազաձևերի միասնություն, որի շինանյութը արտասովոր՝ կենարոնազանց հնարանքներն են: Դրանք՝ իրեն ֆիզիկական արարքներ, նախ գեղարվեստորեն հաղթահարվում են հեղնանքի միջոցով, ապա վերադառնալով շրջանակենտրոն հրապարակ, ձեռք են բերում ներդաշնակություն և հավասարակություն: Այդ իսկ պատճառով էլ կրկեսային արվեստն իր՝ ոչ պատկերային արտահայտչալեղվով և գերիմաստային կերպաձևերով սկզբունքորեն առանձնանում է տարածաժամանակային մյուս արվեստներից՝ թատերական արվեստից ու պարարվեստից, թեև մշտապես գտնվում է դրանց փոխներթափանցման և փոխազդեցության դաշտում: Պատահական չէ, որ այսօր էլ դրա օրինակները շատ ակնառու են:

1. Տե՛ս. Մ. Կազան, Морфология искусства, Л., изд. «Искусство», 1972, с 235-236.
2. В. Н. Всееволодский-Генгресс, Начало цирка в России. - «О театре» («Времяник отдела истории и теории Государственного института истории искусств»), Л., изд. «Academia», 1927, с. 69:
3. Е. Кузнецов, Цирк. Происхождение. Развитие. Перспективы, 2-е изд., М., 1971, с. 384:
4. Խույծ տեղում, էջ 284 (ընդգծումն մերե է - Գ.Օ.):
5. Յահան Հայզինգ, *Homo Ludens*, Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Բարգ. Ռ. Դրաբյան, խմբ. Հ. Հովհաննեսյան, Երևան, «Սարգիս Խաչեց», 2007, էջ 242:
6. Տե՛ս. В. Назаренко, Родной брат сказки. - «Советская эстрада и цирк», 1971, № 7, с. 9-10:
7. Հմայտ. Գր. Ղափանցյան, Ենթակառութեալարական թյուն, Եր., Գյուշամալուրանիք Հրատ., 1939, էջ 166-170:
8. Հմայտ. Л. С. Выготский, Психология искусства, М., изд. «Искусство», 1986, с. 136. Միանույն առանձնահատկություններեն է ընդգծում նաև Վ. Գրունցը՝ Ծերպի ձեռարանությունն ուսումնասիրելիս (Վ. Я. Пропп, Морфология сказки, М., изд. «Наука», 1969, с. 130-144):
9. Ю. Дмитриева, В чем же все-таки специфика цирка? - «Советский цирк», 1960, № 8, с. 11.
10. Յու. Բորկ, Գեղագիտություն, ուսու. Բարգ. Մ. Տոցանյան, Երևան, «Հայաստան» Հրատ., 1982, էջ 345-346:
11. Цирк. Մանակ энциклопедия, М., изд. «Советская энциклопедия», 1979, с. 381.
12. Театральная энциклопедия, т. 5, М., «Советская энциклопедия», 1967, с. 982.
13. Հ. Հովհաննեսյան, Խաղը՝ բեմական ներկայություններին հիմք է համար. Յահան Հայզինգ, *Homo Ludens*, Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Բարգ. Ռ. Դրաբյան, խմբ. Հ. Հովհաննեսյան, Երևան, «Սարգիս Խաչեց», 2007, էջ 343:
14. А. Ф. Лосев, Гомер, М., изд. «Молодая гвардия», 1996, с. 217-219.
15. Կործում հեր, պատահական լիք, որ Կ. Զոլդերը Ծեղանքի տեսություն իր դրամատիզմութեավագործին, համար օրինակեց է բերում Համերույան պահեներից (տե՛ս. К. Гилберт, Г. Кун, История эстетики, М., изд. «Иностранная литература», 1960, с. 481):
16. Տե՛ս. В. Назаренко, Եղանակ, էջ 8-10.
17. Л. Енгибаров, Раздумья клоуна-мима. - «Искусство клоунады», М., изд. «Искусство», 1969, с. 272.
18. Е. Кузнецов, Եղանակ, էջ 283:
19. Литературная теория немецкого романтизма, Л., изд.: АН СССР, 1934, с. 177.
20. Г. Фукс, Революция театра, СПб., изд. «Грядущий день», 1911, с. 108.
21. В. Э. Мейтерхольд, Техника сценических движений. - «Любовь к трем апельсинам», № 4-5, 1914, 94-98.

22. *Sb'». А. Румысов, О пантомиме. Театр. Кино, М., изд. «Искусство», 1964, с. 11.*
23. *Д. С. Лихачев, Поэтика древнерусской литературы, М., «Наука», 1979, с. 113.*
24. *Sb'». S. Alexander, Beauty and other Forms of Value, London, 1933, p. 84.*
25. *Sb'». Н. Гартман, Эстетика, М., изд. «Наука», 1958, с. 141.*
26. *Ж.-Ж. Новерр, Письма о танце и балетах, Л.-М., 1965, с. 89.*
27. *Древнегреческо-русский словарь, сост. И. Х. Дворецкий, изд. Иностранных и национальных словарей, М., 1958, т. 1, с. 70. Λαγη διατελεσθαιρρωτης λέξη
εργάζομενής μετατελεσθαιρρωτης ή αἰδηψός ρωμαϊκός, πρήβης οἰκιάρχης πατρώρων
ρωμαϊκού πρωτοπρεσβύτης ή πατέρης θεού οἰκιάρχης πατρώρων. «εγκαρπίζεις
κρητική, διατελεσθαιρρωτης καρκινοπαθείρως αἰδηψός» & ή διατριμονίας πατέρας γένεται
προφέτης γητός. ἀκροβατεῖς, summis pedibus incedo» (ρέρηδοντείσθηρρως αἰδηψός
λέξη - 9. О.).*
28. *Suzanna K. Langer, Philosophi in a New Key, Cambridge, The Harvard University Press, 1942, p. 240.*
29. *К. С. Станиславский, Собрание сочинений в 8-ми томах, т. 6, М., изд. «Искусство», 1959, с. 73.*
30. *Інсіж таңғылым, қызыл. 2, № 33:*
31. *А. Танров, Записки режиссера, М., изд. Камерного театра, 1921, с. 31.*